
**«ՌՈՄԵՈ ԵՎ ՋՈՒԼԻԵՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ
ԲԱՆԱՅՑՈՒՄԱԿԱՆ ՋՈՒԳԱՇԵՌՆԵՐԸ**

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Տ. Բ.

Բանահյուսությունը միննույն կենսակերպով ապրող մարդկանց բնորոշ առանձնահատկություններն արտացոլող մշակութային ձև է: Այն զարգանում է մարդկանց գործունեության շնորհիվ, որոնք կիրառում են իրենց սեփական արտահայտչաձևերը: Գրականությունը՝ որպես անհատական ստեղծագործության կառույց, միանգամայն նոր ծավալով է հանդես գալիս, որն առնչվում է տվյալ խմբի մարդկանց մշակութային արտահայտչամիջոցների հետ¹:

Ե՛վ բանահյուսական, և՛ գրական ավանդույթներն այսօր շարունակում են գոյություն ունենալ կողք կողքի, բայց անցյալի ու ներկայի իրենց դերերով տարբերվում են միմյանցից: Այս տարբերությունը երևում է նրանց վերարտադրման, տարածման և իրացման գործընթացում: Բանահյուսության և գրականության տարբերությունը հետևյալն է.

Բանահյուսություն	Գրականություն
բանավոր	գրավոր
ներկայացում	տեքստ
առդեմ հաղորդակցություն	անուղղակի հաղորդակցություն
անցողիկ	հարատև
հանրային իրադարձություն	անհատական իրադարձություն
վերստեղծում	ստեղծագործություն
տարբերակ	կրկնություն
ավանդույթ	նորարարություն
կոլեկտիվ ներկայացում	ընտրողական ներկայացում
հանրային սեփականություն	մասնավոր սեփականություն
հիշողություն	ընթերցում ² :

Հեղինակային ստեղծագործությունները ևս կարող են ներառել բանահյուսական տարրեր: Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» պիեսում նույնպես առկա են նման դրսևորումներ: Համառոտ անդրադառնանք պիեսի բովանդակությանը և գրական սկզբնաղբյուրին:

Ողբերգության հիմքում ընկած է երկու հակառակորդ գերդաստաններից՝ Մոնդեգյուններից և Կապուլետներից սերված Ռոմեոյի և Ջուլիետի սիրո պատմությունը, որոնց անժամանակ մահն է միայն հաշտեցնում երկու թշնամի ընտանիքներին:

Պիեսը բաղկացած է 3007 տողից: Ստույգ հայտնի չէ, թե երբ է գրվել: Ոճական և տաղաչափական մի շարք առանձնահատկոթ-

¹ **Zipes, Jack.** *Breaking the Magic Spell: Radical Theories of Folk and Fairy Tales.* University of Texas Press, 1979, p.11.

² Նույն տեղում: Այս մասին տե՛ս նաև **Ջիվանյան Ա.,** *Հրաշապատում հեքիաթի պոետիկան. համեմատությունը հեքիաթի համատեքստում,* Ե., 2008, էջ 21:

յուններ հիմք են տալիս ենթադրելու, որ ստեղծագործությունը կարող էր գրված լինել 1595 թ. կամ նույնիսկ ավելի վաղ³:

Գործողությունները կատարվում են Վերոնայում և Մանտուայում: Մոնդեգյունները և Կապուլետները՝ երկու ազնվական ընտանիքներ, իրենց թշնամությամբ անընդհատ խաթարում են քաղաքի անդորրը: Այդ թշնամությունն էլ դառնում է Ռոմեոյի և Ջուլիետի ողբերգական մահվան պատճառը: Սիրահարների մահն իր հետ բերում է Կապուլետների ու Մոնդեգյունների հաշտեցումը:

Պիեռի պյուժետային հիմքերն առկա են մի շարք գրողների երկերում: Ստեղծագործության առաջին օրինակները հանդիպում են դեռևս XV դ. Իտալիայում: Մասուչո Մալերնիտանոն պյուժեի մեծ մասը ներառել է իր «Պատմվածքներ» (1476) գրքի 33-րդ՝ Մարիոտոյի և Գանոգայի մասին նովելում⁴:

Շեքսպիրի ողբերգության գլխավոր աղբյուրը Արթուր Բրուկի՝ 1562 թ. գրած «Ռոմեոյի և Ջուլիետի ողբերգական պատմությունը» ստեղծագործությունն է՝ գրված ֆրանսիացի Պիեռ Բոաիստոտյի թարգմանության հիման վրա⁵: Բրուկից վերցնելով պյուժեի կորիզը՝ Շեքսպիրը վերափոխեց այն: Պիեռը տպագրվեց 1597 թ. և գնահատվեց որպես «ամբոխին գոհացնող» ստեղծագործություն: Ժամանակակիցներից մեկի վկայությամբ՝ բեմադրությունները հաճախ էին ուղեկցվում «բուռն ծափահարություններով»⁶:

Շեքսպիրը վերամշակել է Բրուկի պոեմը. խտացրել է ժամանակահատվածը, զարգացրել կերպարները, ավելացրել որոշ տեսարաններ: Փոխելով Ջուլիետի տարիքը տասնվեցից տասնչորսի՝ Շեքսպիրն ավելի է շեշտել նրա երիտասարդ ու խոցելի լինելը: Բրուկի պոեմում՝ պատշգամբի տեսարանում, Ջուլիետի խոստովանությունն արվում է միայնության մեջ: Մինչդեռ Շեքսպիրի Ռոմեոն լսում է Ջուլիետի մենախոսությունը: Ռոմեոյի ներկայությունն այս տեսարանում սիրահետման բնականոն կարգի խախտում է: Ըստ սովորության՝ երկրպագուի անկեղծության մեջ համոզվելու համար կինը չէր կարող նրա հետ այդ մասին խոսել: Այս օրենքի խախտումը հնարավորություն է տալիս պյուժեն արագ զարգացնել՝ խուսափելով սիրահետման երկար ընթացքի նկարագրությունից⁷:

Շեքսպիրը, Մերկուտիոյի հետ կապված, նոր տեսարաններ է ավելացրել. մեկում Մերկուտիոն խոսում է Մեթ⁸ թագուհու մասին, մյուսում՝ հանդիպում Ջուլիետի ստնտուին:

Շեքսպիրը

փոխել

է

³ Շեքսպիր Վ., Ռոմեո և Ջուլիետ, թարգմ. Խ. Դաշտենց, Ե., 1974, էջ 236:

⁴ The Oxford Shakespeare Romeo and Juliet, ed. by Jill L. Levenson, United States, 2008, p. 4.

⁵ Պիեռ Բոաիստոտն թարգմանել է իտալացի գրող Բանդելլոյի ստեղծագործությունը, որը վերցված է Լուիջի դա Պորտոյի գրվածքից (www.dramaticpublishing.com/AuthorsCornerDet.php?titlelink=9731&sortorder=1):

⁶ Hankins E. J. The Tragedy of Romeo and Juliet, USA, 1969, p. 4.

⁷ http://en.wikipedia.org/wiki/Romeo_and_Juliet

⁸ Ըստ Կ. Բրիգի՝ Շեքսպիրի երկում Մեթ թագուհին կելտական ծագում ունի. ազդեցիկ Ուելսի Մեթը, հավանաբար, կապ ունի Իռլանդիայի ռազմատենչ թագուհի Մելի հետ (տե՛ս The Oxford Shakespeare Romeo and Juliet, p. 184):

նաև Տիբալտի սպանության տեսարանը: Մերկուտիոն Ռոմեոյի փոխարեն ընդունում է Տիբալտի մարտահրավերը և սպանվում: Բրուկի ստեղծագործության մեջ Ռոմեոն սպանում է Տիբալտին՝ ինքնապաշտպանության դիմելով, իսկ Շեքսպիրի Ռոմեոն, Տիբալտին սպանելով, վրեժխնդիր է լինում ընկերոջ մահվան համար:

Ռոմեոյի և Ջուլիետի հեղինակը կրճատել է գործողությունների կատարման ժամանակամիջոցը՝ ամիսները դարձնելով ընդամենը օրեր: Բրուկի պոեմում, երբ Տիբալտի մահը բաժանման պատճառ է դառնում, նրանք երեք ամիս է, ինչ ամուսնացած են լինում: Մինչդեռ Շեքսպիրի պիեսում նրանց ամուսնությունը տեղի է ունենում հենց Տիբալտի մահվան և Ռոմեոյի աքսորի օրը: Ավելացված է նաև այն տեսարանը, որտեղ Կապուլետը Ջուլիետի և Պարիսի հարսանիքի օրը հինգշաբթիից տեղափոխում է չորեքշաբթի: Այս փոփոխություններն արված են ցույց տալու դավադրաբար զարգացող իրադարձությունների այն արագությունը, որը դառնում է հերոսների ողբերգական մահվան պատճառը:

Շեքսպիրի այս ողբերգության մեկնաբանության բազմաթիվ փորձեր են եղել: Փորձենք նորովի քննել ստեղծագործությունը բա- նահյուսական զուգահեռների համատեքստում: «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության բանահյուսական համարժեքներ կարելի է գրտ-նել Սթիթ Թոմփսոնի հայտնի առարկայացանկում՝ N 343.4 և F 1041.1.2.1 շարքերում⁹:

Այս ստեղծագործությունը հիշեցնող առասպելները Վագներն անվանել է լիբեստո (Liebestod): Չնայած այս տերմինի իմաստը փոփոխական է՝ սեր մահվան մեջ, մահ սիրո մեջ, սիրո վախճան, այնուամենայնիվ, այն բնութագրում է հատուկ պատմողական ձևաչափ և հոգեբանական իրադարձություն: Երիտասարդ սիրահարները բախվում են անհաղթահարելի խոչընդոտների և դրանք դիմակայում են պայքարով ու գաղտնի ծրագրերով: Սակայն նրանց ծրագրերը պատահականության և սխալների պատճառով ձախողվում են. վերջում երկուսն էլ մահանում են հանուն սիրո¹⁰:

Պիեսի բանահյուսական զուգահեռները հանդիպում են տարբեր ազգերի մշակույթներում: Ահա Սարանոյի՝ Բոսկո Բրկիքի և Ադմիրա Իզմիքի ողբերգական սիրո պատմությունը¹¹: Սարանոյի պաշարման ժամանակ երիտասարդ զույգը՝ Բոսկո Բրկիքը և Ադմիրա Իզմիքը, փախչում են քաղաքից: Փախուստի ժամանակ երկուսն էլ վիրավորվում են և մահանում:

Մեկ այլ նկարագրություն է Ջայապրանայի և Լայոնսարիի ողբերգական սիրո պատմությունը, որը համարվում է բալիական «Ռոմեո և Ջուլիետը»¹²: Կալիանգետի թագավորությունը, որը Հյուսիսային Բալիում մի փոքրիկ գյուղ էր, հզոր և իշխանատենչ մի

⁹ Thompson, S., *Motif-Index of Folk Literature: A Classification of Narrative Elements in Folktales, Ballads, Myths, Fables etc.*, vol. six, Bloomington & London, Indiana University Press.

¹⁰ The Oxford Shakespeare *Romeo and Juliet*, p. 2.

¹¹ en.wikipedia.org/wiki/Folklore_of_Sarajevo

¹² www.balibagus.com/folklore/jayaprana.html

թագավոր ուներ: Գյուղում համաճարակ է տարածվում, որը բազմաթիվ կյանքեր է խլում: Ջայապրանան, որը փոքրիկ, անօգնական տղա էր և ապրում էր միայնակ ու տխուր կյանքով, փրկվում է համաճարակից: Հանգամանքների բերումով նա մեծանում է թագավորի պալատում, ծառայում նրան և դառնում թագավորի սիրելին: Ջայապրանան սիրահարվում է Լայոնսարի անունով մի աղջկա: Հարսանիքը տեղի է ունենում պալատում: Թագավորը հմայվում է Լայոնսարիի գեղեցկությամբ և նենգ դավադրությամբ ազատվում է Ջայապրանայից՝ կարծելով, որ դա կլինի իր երջանկության գրավականը: Սակայն Լայոնսարին հրաժարվում է ամուսնանալ թագավորի հետ և ինքնասպան է լինում:

Մեկ այլ ողբերգություն է Լայլայի և Մաջնուի սիրո պատմությունը, որն էլ համարվում է հնդկական «Ռումեո և Ջուլիետը»¹³: Արաբերեն «մաջնուն» բառացի նշանակում է «խենթ»: Այսպես էին կոչում Քաիս անունով մի տղայի, որը խենթի պես սիրում էր գնչուհի Լայլային: Բայց Լայլայի հայրը որոշում է դստերն ամուսնացնել ուրիշի հետ՝ հակառակ նրա կամքի: Այս լուրն ակնթարթորեն փրշրում է Մաջնուի երազանքները և խելագարության հասցնում նրան: Այս պատճառով էլ նրան անվանում են Մաջնու, այսինքն՝ «խենթ»: Երբ պարզ է դառնում, որ սիրահարները չեն կարող միասին լինել, Մաջնուն խենթացած հեռանում է պալատից և անապատում իրեն սովի մատնում: Իսկ Լայլան հարսանիքի օրը թույն է ընդունում:

Սասիի և Պունուի սիրո պատմությունը ևս հնդկական բանահյուսությունից է¹⁴: Երբ Սասին ծնվում է, աստղագետն ասում է, որ աղջիկը հավատափոխ է լինելու: Լինելով մեծ հավատի տեր՝ հայրը սարսափից աղջկան դնում է զամբյուղն ու գցում գետը: Գետի մյուս ափին գտնելով զամբյուղը՝ մարդիկ այն տալիս են ամուսինների, որոնք երեխաներ չունեին: Նրանք որդեգրում են փոքրիկին և Սասի անվանում: Արքայազն Պունուն Սասիին տեսնում է պուրակում և գերվում նրա գեղեցկությամբ: Սասիին ավելի մոտ լինելու համար՝ Պունուն աղջկա հորը ներկայանում է որպես աղքատ գործազուրկ և նրա մոտ աշխատանքի է անցնում: Տեղեկանալով այդ մասին՝ Պունուի եղբայրները շտապում են այնտեղ: Պունուն ամուսնության առաջարկ է անում Սասիին: Սակայն հարսանիքի օրը ժամանում են եղբայրները և նրան ստիպում վերադառնալ հայրենիք: Երբ Պունուն հրաժարվում է տուն վերադառնալ, եղբայրները քնեցնում են և առնանգում նրան: Անհանգստացած Սասին որոշում է փնտրել ամուսնուն: Օրեր շարունակ միայնակ, տխուր և հուսահատ թափառելով անապատում՝ Սասին մահ է աղերսում: Երկրաշարժ է լինում, և Սասին կենդանի թաղվում է ավազակույտի մեջ: Պունուն ուշքի է գալիս, վերադառնում է ու փնտրում սիրեցյալին: Ճանապարհը նրան ևս անապատ է տանում, որտեղ Սասին մահացած գտնելով՝ Պունուն նույնպես մահանում է:

¹³ www.essortment.com/all/hindufolklore_rlqc.htm

¹⁴ Նույն տեղում:

Հնդկական բանահյուսության մեջ հայտնի է նաև Հիրի և Ռանջայի սիրո պատմությունը¹⁵։ Այն շատ պոետներ և գրողներ են շարադրել։ Նրանցից յուրաքանչյուրը յուրովի է մոտեցել այս ստեղծագործությանը։ Հիրը և Ռանջան սիրում էին միմյանց։ Սակայն նրանց ամուսնությունն անհնար էր, քանի որ Փենջաբում տարբեր ցեղերի մարդկանց ամուսնությունն ընդունված չէր։ Հիրին ամուսնացնում են ցեղակցի հետ, որը հոգեկան խնդիրներ ուներ։ Ամուսնական գիշերը Հիրը փախչում է Ռանջայի հետ։ Ոմանք ենթադրում էին, որ նրանց չեն կարողացել գտնել, ոմանք էլ՝ որ նրանց գտել են և սպանել։

Համանման ստեղծագործություն է նաև Օվիդիոսի «Պիրամոսը և Թիսբեն»¹⁶։ Պիրամոսը և Թիսբեն սիրում էին միմյանց, բայց, քանի որ ծնողները դեմ էին, նրանք չէին կարող ամուսնանալ։ Չկար մեկը, որին սիրահարները վստահեին։

Մի օր սիրահարները որոշում են փախչել ու հանդիպել Բաբելոնի Նինոս թագավորի շիրմի մոտ ու թաքնվել թթենու ծառի տակ։ Թիսբեն Պիրամոսին սպասելիս մի առյուծ է նկատում։ Նա սարսափահար փախչում է և թաքնվում մութ քարանձավում՝ ճանապարհին թողնելով երեսի քողը։ Որսից վերադարձած առյուծը արյունոտ երախով քողը պատառ-պատառ է անում։ Հանդիպման վայր հասնելով և արյունոտված քողը տեսնելով՝ Պիրամոսը ենթադրում է, որ առյուծը հոշոտել է իր սիրեցյալին։ Նա հանում է սուրը և դիմում ինքնասպանության։ Արյունը հոսում է դեպի ծառի արմատները և թթենու պտուղները ներկում մուգ մանուշակագույն։ Թիսբեն վերադառնում է և Պիրամոսին մահամերձ գտնում։ Ձեռքերի մեջ առնելով սիրելիի մարմինը՝ Թիսբեն նրա վերքերը թրջում է իր արցունքներով՝ կաթիլները խառնելով նրա արյանը։ Համբույրներով պատելով նրա սառը դեմքը՝ բղավում է. «Պիրամո՛ս, այս ի՞նչ դժբախտություն քեզ խլեց ինձնից։ Պիրամո՛ս, պատասխանի՛ր ինձ։ Քո սիրելի Թիսբեն է քեզ կանչում. հնազանդվի՛ր ինձ, բարձրացրո՛ւ գլուխդ»¹⁷։

Թիսբե անունը լսելով՝ Պիրամոսը բարձրացնում է մոտալուստ մահից մթնած հայացքը, նայում նրան և ընդմիջտ փակում աչքերը։

Տեսնելով քողը և փղոսկրյա պատյանն առանց սրի՝ Թիսբեն հասկանում է, թե ինչ է կատարվել։ Նրա կյանքն այլևս անիմաստ է դառնում առանց Պիրամոսի։ Թիսբեն վշտահար դիմում է ծառին. «...դո՛ւ ծառ, որ հիմա քո ճյուղերով մի խեղճ մարմին ես ծածկում, և շուտով երկուսն ես ծածկելու, պահպանի՛ր մեր մահվան խորհրդանիշը և ի հիշատակ մեր երկուսի արյան՝ միշտ վշտից սևացած պըտուղներ կրիր»¹⁸։ Վերցնելով Պիրամոսի սուրը՝ Թիսբեն ինքնասպան է լինում։ Այդ օրվանից թթենին միշտ մուգ մանուշակագույն պըտուղներ է տալիս։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ www.mythfolklore.net/3043mythfolklore/reading/ovid/pages/14.htm

¹⁷ Նույն տեղում։

¹⁸ Նույն տեղում։

Մասերում կայացած «Ծառերը բանահյուսության մեջ» գիտաժողովի ժամանակ իր զեկույցում այս պատմությանն է անդրադարձել նաև հեքիաթասաց Ջուն Ուելսը¹⁹:

«Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության և դրան գուգահեռ ստեղծագործությունների ընդհանրությունը մեկն է՝ անձնուրաց սերը: Այդ զգացմունքն այնքան ուժեղ է, որ հերոսները ոչ մի արտաքին խոչընդոտ չեն ճանաչում և վճռականորեն գնում են դեպի նպատակ՝ կանգ չառնելով ոչ մի արգելքի առջև:

ФОЛЬКЛОРИСТИЧЕСКИЕ ПАРАЛЛЕЛИ ТРАГЕДИИ „РОМЕО И ДЖУЛЬЕТТА”

ОГАННИСЯН Т. Б.

Резюме

Авторские произведения могут содержать фольклористические элементы. Трагедия Шекспира „Ромео и Джульетта” не является исключением.

Главным источником пьесы Шекспира является произведение Артура Брука „Трагическая история Ромео и Джульетты”. А фольклористические параллели можно найти в фольклоре разных культур, в частности, „Боско Бррик и Адмира Измик” (Сараево), „Джайапра и Лайонсари” (Бали), „Лайла и Маджну” (Индия), „Саси и Пуну” (Индия), „Ир и Ранджа” (Индия). Подобные элементы наличествуют и в драме „Пирамус и Тисбе” Овидия.

Объединяющая тема трагедии „Ромео и Джульетта” и е, фольклористических параллелей одна – это самоотверженная любовь.

¹⁹ Հստ նրա՝ թթենու հետ կապված այլ լեգենդներ կան: Թթենու հայրենիքը Իրաքն է՝ հին Բաբելոնը: Այն ներմուծվել է Բրիտանիա մոտ 400 տարի առաջ՝ մետաքսի առևտուրը հիմնելու համար: Հստ Պլինիոսի և այլ հեղինակների՝ երբ թթենու տերևները թափվում են, այլևս սառնամանիքներ չեն լինում: Բսկ կարմիր պտուղներով թթենին և դեղին պտուղներով սերկևիլը միշտ պետք իրար կողքի տնկել (թթենին՝ դեպի հարավ, սերկևիլը՝ հյուսիս), այլապես դժբախտություն կը պատահի: Թուր ուտելը անհաջողություն էր համարվում: Սովորաբար գերմանացիներն իրենց երեխաներին ասում էին, որ սատանան այն օգտագործում է իր կոշիկները սև ներկելու համար (Trees in Folklore: June Wells – Mulberries: A New Approach to Pyramus and Thisbe, Sussex, August, 2007):